



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Հայերենի ուղղագրության ուսուցման առանձնահատկությունները
միջին դպրոցում

ԱՌԱՐԿԱ

Հայոց լեզու

ՀԵՂԻՆԱԿ

Կարինե Ղուլյան

ՄԱՐԶ

Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Թաիրովի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

3. ԳԼՈՒԽ 1

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

4. ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

5. ԳԼՈՒԽ 3

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Ուսուցանելն արվեստ է: Ուսուցիչը դրան հասնում է մեծ, համառ աշխատանքով և փորձով:
Ուսուցիչը դիդակտիկայի կանոններին չպետք է ստրկորեն ենթարկվի, այլ իր անձնական փորձով
դա այդ կանոնների դրական լինելու գիտակցությամբ:*

Գ. Էդիլյան

Գրավոր խոսք կառուցելու հիմնական դժվարություններից մեկը ուղղագրությունն է, որի ուսուցումը նպաստում է ոչ միայն ճիշտ գրելու, այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը, ուստի այն հայոց լեզվի դասընթացի խնդիրներից է և ծրագրային պահանջ:

Ուղղագրության դերը մեծ է և գրավոր հաղորդակցման գործառույթի ապահովման, և ճիշտ գրելու, և ճիշտ արտասանելու, գրված ու կարդացվող նյութի միասնական ըմբռնման հասնելու համար:

Լեզուն անընդհատ փոփոխությունների է ենթարկվում, հղկվում է, հարստանում, և անհրաժեշտություն է առաջանում շարունակ հարստացնելու բառապաշարը, հետևելու և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքի ճիշտ կառուցմանը:

Այսօր անկախ Հայաստանում ազգային բովանդակությամբ կրթություն է իրականացվում, և դպրոցն է որոշում կրթության ազգային բովանդակությունը: Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներով էլ միաձուլվում են ուսուցումն ու դաստիարակությունը: Կիրթ և գրագետ անհատին բնորոշ է կիրթ և գրագետ խոսք կառուցելը՝ ուղղագրական և ուղղախոսական կանոններին տիրապետելը:

Առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը գիտելիքների, կարողությունների, հմտությունների վերաբերյալ՝ այս հետազոտական աշխատանքում կանդրադառնանք այն հարցին, թե ինչպես դաստիարակել կիրթ և գրագետ անհատ, ով կտիրապետի ուղղագրական և ուղղախոսական կանոններին: Ուստի ձևակերպենք մեր աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել հայերենի ուղղագրության ուսուցման առանձնահատկությունների էությունը միջին դպրոցում:

Հետազոտության խնդիրներն են՝ ուսումնասիրել թեմային վերաբերող գիտամանկավարժական և գիտամեթոդական գրականությունը,

Մշակել ուղղագրության ուսուցմանը նպաստող մեթոդների համալիր,

Ներկայացնել օրինակելի դասի նմուշօրինակ ,

Բացահայտել ուղղագրական օրինաչափությունների ուսուցումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Աշխարհը, անվերջ փոփոխությունների ենթարկվելով, իր պահանջներն է առաջադրում հասարակական կյանքի բոլոր ոլորտներին, ինչպես նաև կրթական համակարգերին: Արդի ժամանակաշրջանը տեղեկատվության և գիտելիքների գերակայության դարաշրջան է, որն էլ պահանջում է դինամիկ փոփոխություններ ամենուր՝ գիտության մեջ, առտնին կենցաղում, առհասարակ, մտածողության մեջ: Կրթության ոլորտում բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը պայմանավորում է ուսուցման կազմակերպման նոր համակարգերի ու մոտեցումների ներդրման անհրաժեշտություն թե՛ միջնակարգ հանրակրթական, թե՛ բարձրագույն ուսումնական համակարգերում: Ուսուցման ավանդական ձևերի կողքին կազմակերպվում են նորերը՝ արդիականները, որոնք առաջադրում են ուսուցման ժամանակակից ձևեր ու մեթոդներ: Ուսուցման գործընթացը երկկողմանի է, ուստի խիստ անհրաժեշտ է ապահովել սովորեցնողի (ուսուցչի) և սովորողի (աշակերտի) փոխկապակցված աշխատանքը: Ուսուցման մեթոդներն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Սովորողը պետք է հստակ իմանա՝ ինչ է անում և ինչու, պետք է մշտապես տեղյակ լինի՝ ինչ է իրենից ակնկալվում, պետք է վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու է, օգնելու է իրեն : Ուղղագրության ուսուցման հարցը անցած մեկ դարի ընթացքում բազմիցս մշակվել է թե քերականության դասագրքերում և թե մեթոդական ձեռնարկներում և առանձին ուսումնասիրություններում: Այդ հարցին ամենից ավելի հանգամանորեն անդրադարձել են մեծ հայագետ Մ. Աբեղյանը, Տ. Ռաշմաճյանը և Գ. Էդիլյանը, որոնց աշխատություններն այսօր էլ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Տ. Ռաշմաճյանը նշակել է հին ուղղահիքության ուսուցման հարցը և գերազանցապես հենվել է ընդօրինակման մեթոդի վրա, որի հիմքում, ինչպես հայտնի է, ընկած էր արտագրությամբ ճիշտ գրել սովորեցնելու սկզբունքը: Այդ բնագավառում Մ. Աբեղյանի կատարած հետազոտությունները հանգեցրին ուղղագրական բարեփոխումների մշակմանը և նոր ուղղագրական առաջադրմանը, որը հետագայում մասնակի վերանայման ենթարկվեց: Պետք է նկատել, որ Մ. Աբեղյանի հետաքրքրությունների շրջանակը հիմնականում ուղղահիքության լեզվական կողմն էր, չնայած անժխտելի է, որ դրա արմատները մասամբ գալիս էին նաև ուսուցումից, որովհետև առաջին հերթին հենց ուսուցման դժվարությունների էին դրդել վերանայելու ուղղագրության գոյություն ունեցող նորմաները: Գ. Էդիլյանը ուղղագրության ուսուցման հարցին անդրադարձել է մի քանի անգամ՝ մեթոդիկայում, առանձին աշխատության մեջ, դասագրքերում և այլն: Նա մերժում է թե ընդօրինակման մեթոդի և թե հնչյունային մեթոդի գերազանցատումը, որովհետև դրանցից յուրաքանչյուրն ուներ իր դրական և բացասական կողմերը, և մեկը մյուսին լիովին փոխարինել չէր կարող: « Ուսուցիչն իրավունք չունի ուղղագրություն սովորեցնելու ժամանակ օգտվելու ուղղագրական մի միջոցից, նա պետք է բազմազան միջոցներից օգտվի: Ուղղագրություն սովորեցնելու ժամանակ գործելու են՝ աչքը, ականջը, բերանն ու ձեռքը, ինչպես և միտքը: Հոգեբանությունն էլ այդ է ասում. որքան շատ են գուգորդումները , այնքան տպավորությունը գորեղ է լինում և անմոռանալի՝» :

Ուղղագրության ուսուցման հարցին անդրադարձել են նաև Ա. Ղարիբյանը, Ա. Ամիրյանը և Ռ. Բաղդամյանը: Նրանք բավականին մանրամասնորեն քննարկել են այդ հարցը. առաջադրել են ուղղահիքության ուսուցման իրենց համակարգը, որը և առ այսօր դեռևս մնում է գործածության մեջ, եթե հաշվի առնենք գործնականում արդեն կատարված փոփոխությունները , որոնք դեռևս մեթոդիկայում իրենց արտացոլումը չեն գտել:

Ա. Ղարիբյանի և Ա. Ամիրյանի մոտ ուղղագրության ուսուցումը քննարկված է բացարձակապես միայն լեզվական տեսակետից, ուստի նրանց տված շարադրանքում գերազանցապես տիրապետող է գրավոր աշխատանքներում նկատվող սխալների տիպավորման և, ըստ այդ առանձին տիպերի, դրանց հաղթահարման միջոցների ու մեթոդական ձևերի ընտրության հարցը:

Դեռ, ըստ էության, , ընդգրկում է ուղղագրության ուսուցման աշխատանքի միայն մի մասը, այսինքն՝ ուսուցումից հետո գրավոր աշխատանքներում թույլ տված սխալների ու դրանց վերացմանը, իսկ բուն ուղղագրության առաձևահատկությունների, դրանց խմբավորման և ուսուցման մեթոդների հարցերը չեն շոշափվում²:

¹Գ. Էդիլյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923, էջ 273-274,

²Հմմտ. Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, էջ 159-188

Նույնիսկ «Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները և ուսուցման մեթոդները» վերնագրի տակ Ա. Ամիրյանը կլանգ է առնում միայն սխալների տիպերի վրա, իսկ ուղղագրության հիմունքների և ուսուցման մեթոդների հարցը շրջանցվում է¹:

Ուղղագրության ուսուցման հարցն այլ ձևով է քննարկել նաև Ռ. Բաղրամյանը: Նրա մոտ բավականաչափ մանրամասնորեն վերլուծվում է են հայերենի ուղղագրության հիմունքների հարցերը, ցույց են տրվում, թե ուղղագրությունն ինչ տարատեսակներ կամ հիմնական բաժանումներ ունի, և դրանցից որը ինչ տեղ է գրավում մայրենի լեզվի տարրական կամ համակարգված դասընթացում: Սակայն այստեղ ևս ուսուցման մեթոդների հարցերը անհրաժեշտ պարզաբանում չեն ստացել, չնայած այդպիսի հատուկ պարագրաֆի առկայությանը²:

Մեր կարծիքով ուղղագրության ուսուցման հարցի քննակումը չի կարելի սահմանափակել միայն սխալների ուղղման աշխատանքի վերլուծությամբ: Այդ հարցը պետք է վերցնել իր ամբողջական բույթով, ինչն էլ կփորձենք անել մենք:

¹Հմմտ. Ա. Ղարիբյան, Ա. Ամիրյան և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955, էջ 289-325,

²Հմմտ. Ռ. Բաղրամյան. Հայերենի ուղղագրությունը և նրա ուսուցման հարցերը, Երևան, 1957,

ԳԼՈՒԽ 1

ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ուղղագրության ուսուցումն աշակերտների համար երկակի նշանակություն ունի. մի կողմից կապված է լսածը ճիշտ գրի առնելու վերաբերյալ հասարակականորեն ընդունված և պետականորեն օրինականացված կանոնների հետևողական կիրառության, իսկ մյուս կողմից՝ գրածը ճիշտ կարդալու, ճիշտ վերծանելու ժամանակ գրական արտասանության կամ ուղղախոսական ընդունված նորմերի ժիշտ պահպանման հետ: Այս առումով էլ ուղղագրության ուսուցումը, հատկապես տարրական դասարաններում, սերտորեն առնչվում է ուղղախոսական ուսուցման հետ և մեծ արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, երբ հետևողականորեն պահպանվում են այդ զուգորդումները:

Սկսած հինգերորդ դասարանից խորանում է ուղղագրության ուսուցումը: Աշակերտներն արդեն սկսում են ծանոթանալ ձայնավորների և բաղաձայնների ուղղագրական և ուղղախոսական կանոններին թեմա առ թեմա: Հանրակրթական դպրոցի մայրենի առարկան իր մեջ ընդգրկում է թե հայոց լեզվի և թե գրականության նյութը, ուստի ուղղագրության ուսուցումն էլ մենք իրականացնում ենք համապատասխան տեքստերի և բնագրերի միջոցով: Դասագիրքը մեզ հիանալիորեն տալիս է այդ հնարավորությունը:

Ուղղագրական օրինաչափությունների ուսուցումն, ըստ էության, մեծապես նպաստում է ոչ միայն ճիշտ գրելու, այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը և հսկայական նշանակություն ունի մարդու լեզվական կուլտուրայի բարձրացման համար: Հայտնի է, որ ուղղագրական սխալները հաճախ ոչ միայն մթագնում կամ աղավաղում են բառիմաստը, այլև փոխում նախադասության միտքը կամ երկրնտրանքի ու կասկածի տեղիք տալիս: Բավական է նայել հետևյալ բաղաձայնին.

Աղտ- ախտ,

Ուխտ-ուղտ,

Մաս-մագ,

Այս-ադ և այլն:

Դրանց այս կամ այն տարբերակի կիրառումն արդեն խոսքում փոխում է իմաստը, թեպետ արտասանությունը նույնն է կամ գրեթե նույնը: Միայն կիրառության մեջ ենք տեսնում , որ աղտը-կեղտն էր, իսկ ախտը- հիվանդությունը::

Ուղղագրության ուսուցման ժամանակ հենց առաջին դասին հարկավոր է ուղղագրական կարողություններ մշակելու ուղղության մեծ աշխատանք տանել: Դրա համար երեխաներից ոչ միայն մտավոր լուրջ գործունեություն է պահանջվում, այլև լսողության, տեսողության, խոսելու օրգանների և ձեռքի մկանային համակարգի զարգացման նպատակով տարվող վարժությունների կատարման համերատար ու հետևողական աշխատանք, որովհետև այդ բոլորը միասին կարող են նպաստել բառի գրության մտապահմանը¹: Մեր գրավոր մշակույթի մեսրոպյան շրջանում գրության ու արտասանության կամ արտասանության ու գրության տարբերություններ չեն եղել, սակայն ուղղագրական որոշ կանոններ , անկասկած, գրություն ունեցել են, որոնք սակայն շատ սահմանափակ են եղել: Այդ տարբերություններն առաջացել են հետագա դարերի ընթացքում, և դրանց զուգընթաց էլ ծագել են ուղղագրական այն նոր կանոնները կամ նորմերը, որոնց մասին հանգամանորեն խոսվում է պրոֆ. Գ Ջահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և իջնադարյան Հայաստանում» արժեքավոր ու ինքնատիպ հետազոտության մեջ: Այս տարբերություններն ամենից առաջ և ամենից շատ կապվում են բաղաձայնների արտասանության և գրության հետ, սակայն որոշ տարբերություններ էլ առաջացել են ձայնավրներով սկսվող բառերի արտասանության ու գրության միջև, որոնց շուրջ և ձևավրվել են համապատասխան ուղղագրական կանոնները:

Այժմ անդրադառնանք մեթոդներից յուրաքանչյուրին և փորձենք բացահայտել դրանց դրական և բացասական կողմերը՝ գործի դնելով և կիրառելով մեթոդներից յուրաքանչյուրը միջին դասարաններում:

Ընդօրինակման մեթոդ. հիմնադիրը եղել է Լայը՝ փորձառական մանկավարժության նշանավոր ներկայացուցիչներից մեկը: Ըստ այդ մեթոդի կողմնակիցների ուղղագրության ուսուցման համար ամենանպատակահարմար փղանակը ճիշտ գրված ձևերի կամ բառապատկերների ընդօրինակումն է :

Հենց այդ նպատակով էլ նրանք ուղղագրության ուսուցման մեջ բացառիկ տեղ էին տալիս ընդօրինակմանը կամ արտագրություններին:

Մեր կարծիքով այս մեթոդն ունի տևական բնույթ, այն պակաս արդյունավետ է, այն կիրառելով մենք հասնում ենք արդյունքի , բայց դանդաղ քայլերով : Հետազոտությունը ցույց է տալիս, որ մեթոդի արդյունավետությունը կարելի է գնահատել ցածր:

1 А. И. Воскресенская и М. Л. Закожурникова, Практическое руководство к преподаванию , М. 1958, стр. 272,

Հաջորդը **հնչյունային մեթոդն** է, որի կողմնակիցները ուղղագրության ուսուցման մեջ ամենահիմնականը համարում էին երեխայի հնչյունային լսողության ճիշտ զարգացումը, որովհետև մարդ կյանքում ավելի շատ լսելով է գրում, քան տեսնելով , որ նույնիսկ ինքնուրույն գրելու ժամանակ էլ փաստորեն առկա է ներքին խոսքը ինքնաթելադրությամբ, այսինքն ` ներքին լսողությամբ գրելու գործողությունը: Այդ նկատառումով էլ նրանք ուղղագրության ուսուցման մեջ հիմնական տեղը հատկացնում էին թելադրություններին, որոնք բացառիկ կարևոր դեր են խաղում լսողության զարգացման գործում:

Մեր կարծիքով, իհարկե, ունի դրական կողմեր այս մեթոդը, սակայն էլի , այն պակաս արդյունավետ է:

Կանոնարկման մեթոդ. այս մեթոդի կողմնակիցները ուղղագրության ուսուցման մեջ ամենահիմնականը համարում էին ուղղագրական օրինաչափությունների հաստատումը և դրանց համապատասխան կանոնների սերտումը, այլ կերպ ասած ` գտնում էին , որ այդ գործում մեկ ընդհանրացնող կանոնի յուրացումն ավելի շատ բան կարող է տալ երեխային , քան տասնյակ ու հարյուրավորն առանձին բառերի ընդօրինակումը կամ լեզվական փաստերի մտապահումը:

Մեր հետազոտության ընթացքում բացահայտեցինք, որ այս մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, ուստի դրանցից որևէ մեկին բացարձակ նախապատվություն տալը լամ որպես համընդհանուր մեթոդ առաջադրելը շատ դժավր է և սխալ , քանի որ դրանցից և ոչ մեկը որպես ունիվերսալ մեթոդ չի կարող հանդես գալ:

Մենք գտնում են, որ ուղղագրության առանձին բաժինների ուսուցման համար դրանցից որևէ մեկը կարող է ավելի մեծ նախադրյալներ ունենալ:

Մեթոդների առավելության աստիճանը ըստ մեր հետազոտական աշխատանքի.

1. կանոնարկման մեթոդ

2. հնչյունային մեթոդ

3. ընդօրինակման մեթոդ

ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈՂՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ

Մեր կրթական համակարգում երկար տարիներ գործառել է կրթության հանդեպ այսպես կոչված, գիտելիքային-տեղեկատվական մոտեցումը, երբ կրթության բովանդակությունը դիտվում է որպես գիտելիքների կարողությունների և հմտությունների ամբողջություն: Այսօրինակ մոտեցումը գիտելիքների յուրացման բավարար մակարդակ ապահովելով հանդերձ, չի ապահովում ժամանակակից մարդու համար շատ կարևոր մի շարք մտավոր և անձնային որակների ձևավորումը: Սովորողի քննադատական մտածողության, ստեղծագործական կարողությունների բացահայտման ու զարգացման, իրականության հանդեպ ակտիվ վերաբերմունքի և մարդուն անհրաժեշտ կոնկրետ կարողությունների ձևավորման խնդիրները ավանդական կրթությունը անուշադրության է մատնում:

Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել: Սա նշանակում է, որ կրթության բովանդակության մեջ պետք է արտացոլվի տվյալ հասարակության կուտակած մշակութային արժեքները, այնպես որ սովորողները ձեռք բերեն ոչ թե վերացական, կյանքից կտրված ինչ-որ գիտելիքներ ու կարողություններ, այլ կարողանան ներքնայնացնել առկա մշակութային արժեքներն ու ապրել դրանցով:

Այսպիսով, մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները:

Այս խնդիրների լուծման մի միջոց են ինտերակտիվ ուսուցման մեթոդները:

Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է սովորողի ուսուցման պրոցեսին ակտիվ մասնակցությունը: Ուսուցումը պասիվ է, երբ ուսուցիչ աշակերտ հարաբերություններում ակտիվություն դրսևորում է միայն ուսուցիչը, իսկ աշակերտները պասիվ լսողի կամ հանձնարություններ կատարողի դերում են:

Ուսուցումը դառնում է ակտիվ, երբ աշակերտները դառնում են դասապրոցեսի մասնակից, սակայն փոխազդում են միայն ուսուցչի հետ: Ուսուցումն ինտերակտիվ է, երբ աշակերտները փոխազդեցության մեջ են մտնում ինչպես ուսուցչի այնպես էլ միմյանց հետ:

Ինտերակտիվ ուսուցման հիմքը երկխոսությունն է, այն իր բնույթով համագործակցային ուսուցում է և ապահովում է բոլոր աշակերտների ներգրավվածությունը ուսուցման պրոցեսում:

Ինտերակտիվ ուսուցման համար հատկանշական են հետևյալ բնութագրիչները

- կրթության սուբյեկտների՝ ուսուցչի և աշակերտների մշտական փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- սովորողների ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնաարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապն ու անդրադարձ վերլուծությունը:

Ուսուցման արդյունավետությունը զգալիորեն բարձրանում է, երբ աշակերտներն աշխատում են բաժանվելով փոքր խմբերի (3-5 հոգի): Այն էապես մեծացնում է սովորողի ակտիվությունը: աշակերտները համատեղ լուծում են միևնույն խնդիրը, ինքնուրույն կարող են խնդիրը մասնատել առանձին տարրերի, դերերի բաշխում կատարել, քննարկել միմյանց հետ անհասկանալի հարցերը, սովորել միմյանցից ու սովորեցնել միմյանց:

Փոքր խմբերով աշխատանքի առավելություններից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր սովորող աշխատելով մյուսների հետ գիտակցում է, որ պատասխանատվություն է կրում խմբի հաջողության համար: Թիմի անհաջողությունը նաև իր անհաջողությունն է, իսկ ընդհանուր հաջողության համար կարևոր է իր ներդրումը: Այս տեսանկյունից համագործակցային ուսուցումը դաստիարակչական մեծ ներուժ ունի:

Այսօրինակ ուսուցման պարագայում ուսուցչի դերը փոխվում է. նա ոչ միայն դասավանդող է, այլ նաև և գլխավորապես, ուսուցման պրոցեսը կազմակերպող, խմբերի աշխատանքին աջակցող, նրանց գործունեությունը գնահատող, սովորողների իմացական հնարավորությունները, մտածելակերպը, արժեքային կողմնորոշումները բացահայտող, ծագած կոնֆլիկտները լուծող անձ:

Մեթոդը, բառացի նշանակում է «որևէ բանի հասցնող ուղի, լայն իմաստով՝ նպատակին հասնելու եղանակ, որոշակի ձևով կարգավորված գործունեություն:

Մեթոդը իրականության ճանաչման անհրաժեշտ միջոց և գործիք է, այն որոշակի սկզբունքներով, կանոններով ու հնարներով իրականացվող գործունեություն է, որ կոչված է ապահովելու տրված նպատակը տանող կարճագույն ուղի:

Մեթոդները ստեղծվում են այս կամ այն տեսության շրջանակներում և կոչված են ծառայելու վերջինիս: Յուրաքանչյուր տեսություն ստեղծում է իր մեթոդները և նրանց օգնությամբ լուծում տարազան հետազոտական կամ պրակտիկ խնդիրներ:

Ուրեմն, **մեթոդները գործիքներ են, որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում է իր իմացական կամ գործնական նպատակները:** Այլ խոսքով, **մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության դրսևորման միջոց է:**

Առանց մեթոդի տեսություն չկա, կարելի է ասել, որ մեթոդը միշտ թաքնված ձևով առկա է տեսության մեջ. դա գործունեության այն եղանակն է, որը ածանցվում կամ արտածվում է տեսության հիմնարար սկզբունքներից ու օրենքներից:

Կարևոր է ընդգծել նաև մեթոդի ու տեսության տարբերիչ առանձնահատկությունները: Տեսությունները երկու հիմնարար գործառույթ ունեն. **բացատրել առկա փաստերը և կանխատեսել նոր փաստեր:** Մեթոդը նման գործառույթներ չունի, այն ընդամենը տեսության կամ պրակտիկ գործունեության կարգավորիչ է, իրականության ճանաչման կամ նրա վերափոխման ռազմավարություն:

Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող, հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՛ ուսուցման նպատակների իրականացմանը:

Ուսուցման մեթոդն իր գործառույթյան մեջ ենթադրում է որոշակի ուսումնական նպատակի և վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունների ու համապատասխան միջոցների առկայություն: Այլ խոսքով **Ուսուցման մեթոդը, ուսուցման նպատակների իրականացմանն ուղղված մանկավարժի և սովորողների փոխկապակցված ու փոխալսմանավորված գործունեության եղանակ է կամ այլ կերպ՝ ուսումնական խնդիրների լուծմանը միտված, սովորողների իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող մանկավարժի նպատակաուղղված գործողությունների համակարգ:**

Եվ այսպես, դասը և ուսուցման կազմակերպական բոլոր ձևերը ուսուցման ամբողջական գործընթացում երկրորդական նշանակություն ունեն, վերաբերում են ուսուցման արտաքին կողմին, չեն առնչվում նրա ներքին էությանը: Այս համարյա համընդհանուր ճանաչում գտած տեսակետը հիմնված է մի մոտեցման վրա, ըստ որի՝ ուսուցումն իր էությամբ իմացական գործունեություն է: **Մեթոդն է, որ կազմակերպում, կարգավորում է այդ գործունեությունը:** Նրա կիրառումը ուղղակի, կոշտ կախում չունի աշակերտների թվից, դասագրքերի առկայությունից կամ նրանց որակից, ուսումնական միջավայրի առանձնահատկություններից՝ այն ամենից, ինչից ուղղակիորեն կախյալ է ուսուցման կազմակերպական ձևը: Մեթոդը հաշվի է առնում մարդու հոգեկան կառուցվածքը,

հոգեկանում ընթացող իմացական պրոցեսների առանձնահատկությունները, ճանաչողության հոգեբանական մեխանիզմները:

Մեթոդն ստեղծվում է այս ամենի գիտական իմացության հենքի վրա: Ուսուցման կազմակերպական ձևը, ենթադրվում է, որ այս ամենի հետ առնչություն չունի, կամ առնվազն, որոշիչ չէ այդ առնչությունը: Այն հիմնականում կոնկրետ իրադրական խնդիրներ լուծելու գործառույթ ունի. ինչպես միավորել սովորողներին մեկ ընդհանուր ուսումնական գործընթացի մեջ, ինչպես կազմակերպել նրանց և ուսուցչի միջև փոխհարաբերությունները, տվյալ պայմաններում ուսուցման այս կամ այն մեթոդը լավագույնս իրականացնելու համար և այլն:

ԳԼՈՒԽ 3

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ուսուցչի կարևորագույն գործառույթներից է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունը: Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը, նախևառաջ, պայմանավորված է տվյալ առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներով և ուսուցման նպատակներով:

Մեթոդն ինքնին ընդամենը գործիք է՝ դասի նպատակին հասնելու համար. կարևոր է ճիշտ ընտրել և օգտագործել այդ **գործիքը** ուսուցման նախապես պլանավորած նպատակներին հասնելու համար:

Ստորև ներկայացնում ենք դասի տարբեր փուլերում կիրառման համար երաշխավորելի մեթոդների նկարագրություններ:

Դրանց նպատակը, բացի վերը նշվածից, նաև հետևյալն է՝

- սովորողներին հնարավորինս ակտիվ ներառել ուսուցման գործընթացի մեջ,
- ապահովել նրանց գործուն մասնակցությունը դասի յուրաքանչյուր փուլին,
- սովորողի ուշադրությունը հնարավորինս կենտրոնացած պահել և ուղղորդել ինքնուրույն արդյունքների հասնելուն,
- ապահովել արդյունավետ հետադարձ կապ:

Ուղղագրության ուսուցման նպատակով 5-րդ դասարանում կիրառել ենք հետևյալ մեթոդները.

ԴԱՍԻ ՄԿԻՁԲ. Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին բույներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին բույներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

Գուշակություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի (բ-պ-փ բաղաձայնների ուղղագրությունը) հիմնական կարևոր, ուղղագրական դժվարություններ առաջացնող բառերը գրել թղթերի վրա և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ գլխավոր միտքը: Օրինակ՝ կարող եք առանձին թղթերի վրա գրել «դարբին», «երբեմն», «ուրբաթ», «համբույր» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն ընդհանուր հնչյունը, որը միավորում է այս բառերը: Պատասխանն է՝ բ : Մենք նպատակային ընտրություն ենք կատարել՝ ընտրելով այս բառերը , քանի որ հենց բ-ի ուղղագրությունն է դժվարություններ առաջացնում, բայց թղթերը գտնելը բավարար չէր առաջադրանքը կատարելու համար, մեք հանձնարարեցինք նաև գտած բառը գրել գրատախտակին և մի մեծ բ գրեցինք դրանց կողքին: Աշակերտների տեսողական հիշողությունը լավ է զարգացած, նրանք արդեն մտապահելով այս բառերը և տեսնելով մեծադիր Բ-ն , կարծում ենք , չեն մոռանա , որ հենց բ-ով է գրվում դարբին, երբեմն, ուրբաթ, համբույր բառերը: Այնուհետև նոր բառեր կազմեցինք այս բառերով. օրինակ՝ դարբնոց, երբեմնի, ուրբաթագիրք, համբուրել:

Չարմանք, անսպասելիություն Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է: Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը:

Վերջինս ձևակերպվում է պատկերում արտացոլված ոճով:

Ներկայացնում ենք պաստառ, որտեղ գրված են մի շարք բառեր, կրկին ընտրել ենք ուղղագրական դժվարություններ առաջացնողները.


Նուր*, ի*րև, աղ*յուր, ող*ալ, սր*իչ, եր*, համ*երել, աղ*ատար.

Բառերը ներկայացնելուց հետո , ասացինք, որ կորել է տառերից մեկը, բայց նախ եկեք կարդանք այն տառերը հերթականությամբ , որոնք մնացել են բառի մեջ: Բարձրաձայն ընթերցելուց հետո աշակերտները զարմացած միմյանց էին նայում՝ նախ Բացահայտելու համար , թե որ տառը չկա, և հետո էլ, ծիծաղ էր առաջացնում այդ տառակապակցությունների ընթերցումը, նրանք զգացին, թե որքան կարևոր է այդ տառն այդ տառակապակցությունների համար. առանց այդ տառի ոչ մի իմաստ չէր արտահայտվում: Բացահայտեցին, որ Բ տառն է և այն այլ գույնի գրիչով տեղադրեցինք բառերի մեջ:

Նոր նյութի բացատրություն

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Ուստի ներկայացնում ենք միայն կարևորը՝ 4-5 բան:

Օրինակ՝ լավ կլինի օգտագործել կարճ նախադասություններ: Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ: Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի պատկերներով: Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են: Ստորև ներկայացնում ենք գծապատկերի մեր օրինակը:



<i>(նուրբ</i>	<i>(անհամբեր,</i>	<i>(շաբաթ,</i>	<i>(աղբյուր,</i>
<i>սուրբ</i>	<i>համբույր,</i>	<i>խաբել,</i>	<i>եղբայր,</i>
<i>սրբիչ</i>	<i>շամբուտ,</i>	<i>իբրև,</i>	<i>ողբալ</i>
<i>երբ)</i>	<i>համբերել)</i>	<i>Գաբրիել)</i>	<i>աղբաստար)</i>

այս օրինակները գրելուց հետո , մենք նաև գրեցինք կանոնները.

Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ:

Կշռադատման փուլ կամ նոր նյութի ամրապնդում:

5-րդ դասարանի դասագրքում բ-պ-փ-ի ուղղագրությանը զուգահեռ սովորողները յուրացնում են Հանս Քրիստիան Անդերսենի «Սոխակը» ստեղծագործությունը: Մենք դասարանը բաժանեցինք 3 խմբի և հանձնարարեցինք դասագրքի այս նյութի 1-ին մասից գտնել մեր թեմային վերաբերող բառերը¹:

Աշակերտներն առանձնացրել էին հետևյալ բառերը.

Ամբողջ, բարձր, միաբերան, փնտրել, պալատ, համբույր, ճանապարհ, բոլոր, փոքրիկ, զբոսնել, բռնել:

Նրնք պետք է գրեին բառը , իսկ դիմացը՝ կանոնը:

Աշակերտները կարողացան յուրացնել մի շարք բառերի ուղղագրությունը, իսկ ամրապնդելու համար մենք տվեցինք բառաշարք և հանձնարարեցինք կազմել նախադասություններ՝ բարձրաձայն արտաբերելով բառերը:

¹ Գյուրջիսյան Դ. Ալեքսանյան Թ. , Գալստյան Ա. , Մայրենի 5, մաս 1, Երևան, 2019, էջ 64

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետագոտելով «Հայերենի ուղղագրության ուսուցման առանձնահատկությունները միջին դպրոցում» թեման կատարել ենք հետևյալ եզրակացությունները.

- Ուսուցչի կարևորագույն գործառույթներից է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունը: Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը, նախևառաջ, պայմանավորված է տվյալ առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներով և ուսուցման նպատակներով:
- Մեթոդն ինքնին ընդամենը գործիք է՝ դասի նպատակին հասնելու համար. կարևոր է ճիշտ ընտրել և օգտագործել այդ **գործիքը** ուսուցման նախապես պլանավորած նպատակներին հասնելու համար:
- Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնագարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:
- Ուսուցման ճիշտ , համապատասխան մեթոդների ընտրությունը նպաստում են նյութի մաքսիմալ յուրացմանը:
- Ուղղագրական օրինաչափությունների ուսուցումն, ըստ էության , մեծապես նպաստում է ոչ միայն ճիշտ գրելու , այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը և հսկայական նշանակություն ունի մարդու լեզվական կուլտուրայի բարձրացման համար

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բաղդասարյան Ռ, Հայերենի ուղղագրությունը և նրա ուսուցման հարցերը, Երևան, 1957,

Գյուրջինյան Դ. Ալեքսանյան Թ. , Գալստյան Ա. , Մայրենի 5, մաս 1, Երևան, 2019,

Էդիլյան Գ. , Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923,

Ղարիբյան Ա. , Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947,

Ղարիբյան Ա. , Ա. Ամիրյան և ուրիշներ , Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955,

Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008,

Воскресенская А. И. и М. Л. Закожурникова, Практическое руководство к преподаванию , М. 1958